ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լսվել է ԱԿՀ բաժնի թիվ 4նիստում (21նոյեմբեր, 2019թ)

և երաշխավորվել է ներկայացնելու գիտական խորհրդին

Արտաքին կապերի և համագործակցության բաժնի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018-2019 ուստարի

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2018-19 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում արտաքին կապերին և համագործակցությանն ուղղված հիմնական գործողություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության (ԱԿՀ) բաժնի 2018-2019 գործողությունների ծրագիրը, որը մշակվել է բուհի 2019-2023թթ. ռազմավարական զարգացման ծրագրին համապատասխան: Ըստ այդ ծրագրի՝ արտաքին կապերի և համագործակցության բաժնի գերակա ուղղությունները եղել են.

- բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատում և նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքում հայաստանյան և արտասահմանյան համալսարանների և կազմակերպությունների հետ,
- կարողությունների զարգացմանը միտված ընթացիկ ծրագրերի իրականացում և նոր ծրագրերի նախագծում ,
- ԳՊՀ աշխատակիցների և ուսանողների անգլերենի իմացության բարելավում,
- ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության բաժնի գործունեության լուսաբանում:

Բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատում և նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքում հայաստանյան և արտասահմանյան համալսարանների և կազմակերպությունների հետ: ԳՊՀ-ն մեծապես կարևորում է հայաստանյան բուհերի և տարբեր կազմակերպությունների հետ համալսարանի շահերից բխող գործընկերային կապերի ստեղծումն ու զարգացումը, ուստի հաշվետու ժամանակահատվածում ևս աշխատել է այդ ուղղությամբ՝ հաստատելով գործընկերային նոր հարաբերություններ հայաստանյան և արտասահմանյան մի շարք բուհերի և կազմակերպությունների հետ: Այդ կապերը ամրագրվել են համագործակցության պայմանագրերով, համաձայնագրերով և փոխըմբռնման հուշագրերով: Այսպես՝

- 2018թ-ի հոկտեմբերին Էրազմուս+ (LNSS) ծրագրի եզրափակիչ համաժողովում համագործակցության հուշագիր է կնքվել ԳՊՀ-ի և ծրագրի գործընկեր հաստատությունների և համալսարանների միջև, ինչը ենթադրում է Հայաստանի, Մոլդովայի և Բելոռուսի միջև գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում հետագա համագործակցության խթանում, տեղեկատվական գրագետ հասարակության ձևավորում, համալսարանական գրադարանների աշխատակիցների մասնագիտական հմտությունների ու գրադարանային ծառայությունների զարգացում և գրադարանների միջև լավագույն փորձի փոխանակում,
- 2018թ-ի դեկտեմբերին փոխըմբռնման հուշագիր է կնքվել ԳՊՀ-ի և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի միջև՝ շարունակելու երկկողմ փոխըմբռնումը «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար 2018-2019թթ.» ծրագրի իրականացման շրջանակներում, որի նպատակը ԳՊՀ-ի

ուսանողների հասարակական ակտիվության ու իրազեկվածության բարձրացումն է,

- 2019թ-ի հունվարին գործընկերային կապերի սկիզբն է դրվել ԳՊՀ-ի և «Գորիսի ֆրանսախոսների մշակութային կենտրոն» ՀԿ-ի միջև՝ համատեղ միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու համար,
- 2019թ-ի փետրվարին ԱԿՀ բաժինը հայտ է ներկայացրել ԱՄՆ Խաղաղության կորպուս՝ TEFL կամավոր հրավիրելու նպատակով: Հայտը հաջողությամբ ընդունվել է և սկսած 2019թ. հունիսի1-ից Ուինսթոն Փոզգեյթը կամավորական հիմունքներով համագործակցում է ԳՊՀ օտար լզուների ամբիոնի հետ: Համագործակցությունն ուղղված է անգլերենի դասերն առավել արդյունավետ պլանավորելուն և կազմակերպելուն, դասախոսների և ուսանողների համար երկարաժամկետ դասընթացներ կազմակերպելուն և անցկացնելուն, որն էլ իր հերթին կնպաստի ԳՊՀ-ում դասախոսների և ուսանողների շրջանում անգլերենի իմացության բարձրացմանը,
- 2019թ-ի մարտին փոխըմբռնման հուշագիր է կնքվել ԳՊՀ-ի և Ուկրաինայի ճարտարագիտության և մանկավարժության ակադեմիայի (Խարկով) միջև՝ իրականացնելու ուսանողների փոխանակումներ՝ ուսման և հետազոտության նպատակով, կարճաժամկետ ծրագրեր, ակադեմիական աշխատակազմի փոխանակումներ՝ դասավանդման և հետազոտության նպատակով, հետազոտական նախագծերի և հրապարակումների համագործակցություն, կազմակերպելու համատեղ սեմինարներ, կոնֆերանսներ և գիտական այլ միջոցառումներ, մշակելու համատեղ և կրկնակի ծրագրերի կամ ծրագրային տեղաբաշխման և առաջադիմության համաձայնություններ, միջազգային փոխըմբռնմանն ուղղված մշակութային համատեղ գործողություններ,
- 2019 թ-ի մայիսին համագործակցության պայմանագիր է կնքվել ԳՊՀ-ի և «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ-ի միջև, նախատեսում է Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում համալսարանի կոմոից տպագրված և տպագրվելիք նյութերի էլեկտրոնային տարբերակների տեղադրում և հանրայնացում, ինչպես նաև համագործակցություն Սյունիք-Արցախ գիտակրթական կապերի ամրապնդման ուղղությամբ,
- 2019թ-ի մայիսին համագործակցության հուշագիր է կնքվել ԳՊՀ-ի և «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ընկերության միջև, ինչը նախատեսում է երկկողմանի հետաքրքրություններ ներկայացնող արդյունավետ համագործակցային ծրագրեր, որոնք միտված են ուսանողների և դասախոսների վերապատրաստման դասընթացների, խորհրդակցությունների ու քննարկումների կազմակերպմանը, ուսանողների պրակտիկաների անցկացման որակի բարելավման աջակցությանն ու ԳՊՀ-ի «Էլեկտրաէներգետիկա» և «Էլեկտրոնիկա» մասնագիտությունների ուսումնական պլանների, կրթական ծրագրերի վերանայման ու արդիականացման ուղղությամբ համատեղ քայլերի ձեռնարկմանը,
- 2019 թ-ի հունիսին համագործակցության պայմանագիր է կնքվել ԳՊՀ-ի և

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի միջև ԳՊՀ-ում կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականության բարելավմանն ուղղված ընթացակարգերի ներդրման և գործընթացի թափանցիկության ապահովման շուրջ,

- 2019թ-ի հոկտեմբերի 16-ին ԳՊՀ-ն համաձայնագիր ստորագրեց ՀՀ-ում և Արցախում իր գործունեությամբ հայտնի «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» կրթական հիմնադրամի հետ՝ ի դեմս տարածաշրջանի ղեկավար Արմեն Հովհաննիսյանի: Համաձայնագրով համակարգվում է Հիմնադրամի ու Համալսարանի միջև համագործակցությունը երիտասարդ մասնագետների պատրաստման, հավաքագրման, կրթությանն առնչվող միջոցառումների կազմակերպման և իրականացվող ծրագրերի առաջխաղացման ու տարածման ոլորտներում

Վերոնշյալ պայմանագրերը, համաձայնագրերը և հուշագրերը արդեն իսկ պսակվել են հաջողությամբ: Համագործակցությունների արդյունքում ԳՊՀ-ում կազմակերպվել են կրթական և գիտահետազոտական բնույթի միջոցառումներ, իրականացվել են համատեղ ծրագրեր, աշխատակիցները մասնակցել են վերապատրաստման դասընթացների, ուսանողներն ընդգրկվել են քաղաքացիական բնույթի ծրագրերում, 2 ուսանող մեկնել է Ֆրանսիայի Վիեն քաղաք, դրամաշնորհային ծրագրերի մրցույթին դիմելու հնարավորությունն է ընդլայնվել:

Կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի նախագծում և իրականացում: 2018-2019 ուս. տարվա ընթացքում շարունակվել են համալսարանի միջազգայնացման գործընթացները՝ ուղղված միջազգային լավագույն փորձի ներդրմանը, կրթության որակի բարելավմանն ու կարողությունների զարգացմանը: ԳՊՀ-ն շարունակել է հաջողությամբ իրականացնել և ավարտին հասցնել Էրազմուս+ LNSS և Էրազմուս+ HERITAG ծրագրերը:

2018թ. հոկտեմբերի 5ին Քիշինևում ԵՄ Արևելյան գործընկերության անդամ երեք երկրների՝ Հայաստանի, Բելառուսի ու Մոլդովայի ինը բուհի գրադարանների ղեկավարների միջև կնքվեց գործընկերության և համագործակցության հնգամյա հուշագիր, որը ենթադրում է Հայաստանի, Մոլդովայի և Բելոռուսի միջև գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում հետագա համագործակցության խթանում, տեղեկատվական գրագետ հասարակության ձևավորում, համալսարանական գրադարանների աշխատակիցների մասնագիտական հմտությունների ու գրադարանային ծառայությունների զարգացում և գրադարանների միջև լավագույն փորձի փոխանակում:ԳՊՀ-ում ծրագրի համակարգող Ն. Սաֆարյանը մասնավորապես անդրադարձավ ծրագրի համաֆինանսավորման շրջանակներում վերանորոգված և ծրագրի միջոցներով ձեռք բերված սարքավորումներով հագեցած ընթերցասրահի առկայության կարևորությանը, որը հնարավոր է դարձրել բարելավել գրադարանային ծառայությունները, թվայնացնել հավաքածուներն ու ինտեգրվել ազգային և միջազգային գրադարանային ցանցերին: Նա նաև խոսեց ծրագրի շնորհիվ ԳՊՀ-ի գրադարանի և դրա ծառայությունների մասին բարձր իրազեկվածության, համայնքային և մարզային այլ գրադարանների հետ սերտ կապերի ու համագործակցության համար առկա բարենպաստ պայմանների և նախադրյալների առկայության մասին: Բազմազան վերապատրաստումները ծրագրի շրջանակներում նպաստեցին ոչ միայն ԳՊՀ-ի

դասախոսական, վարչական և գրադարանի աշխատակազմի ներկայացուցիչների, այլ նաև համայնքային գրադարանների աշխատակիցների շրջանում համապատասխան մասնագիտական հմտությունների ու գիտելիքների ձևավորմանը և գրադարանային գործի զարգացմանը տարածաշրջանում:

Ծրագիրն ունեցել է մեծ ազդեցություն և շոշափելի վերջնարդյունքներ.

- ✓ 67 մասնակիցներ /ԳՊՀ գրադարանավարներ, դասախոսական ու վարչական աշխատակազմի և համայնքային գրադարանների ներկայացուցիչներ/ վերապատրաստվել են ծրագրի 8 դասընթացներում
- ✓ Ստեղծվել է ԳՊՀ գրադարանի ֆոնդի հարստացման ռազմավարական պլանի նախագիծը
- ✓ Մշակվել են մոդուլ 1-ը և 4-ը ու իրականացվել են 2 պիլոտային դասընթացներ
- ✓ Համաֆինանսավորման շրջանակներում վերանորոգվել է ԳՊՀ գրադարանի ընթերցասրահը և սպասարկման սրահը
- ✓ Ծրագրի միջոցներով ձեռք են բերվել նորագույն սարքավորումներ/ համակարգիչներ, պատճենահանման, տեսածրման սարքեր, էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ, ինտերնետային կապի ապահովման սարքավորում/ և տեղադրվել գրադարանի ընթերցասրահում
- ✓ Մեկնարկել է ԳՊՀ գրադարանի հավաքածուների թվայնացման և գրադարանի կառավարման ԿՈՀԱ ծրագիրը
- ✓ Կազմակերպվել և իրականացվել են Ազգային իրազեկության 2 օր- (3 մայիսի, 2017թ և 1 հունիսի, 2018)
- ✓ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով պատրաստվել են գովազդային բազմապիսի նյութեր /բրոշյուրներ, պաստառներ, լուսանկարների ստենդեր / և շուրջ 16 երկլեզու նյութ տեղադրվել է ԳՊՀ-ի և ծրագրի պաշտոնական կայքերում, ԳՊՀ-ի և մարզային պաշտոնական թերթերում:

Ծրագրի պաշտոնական ավարտը տրվել է 2018թ-ի հոկտեմբերի 15-ին:

Բաժինը աշխատանքներ է տարել նաև ԳՊՀ-ում Էրազմուս+ LNSS ծրագրի շարունակականության ապահովման ուղղությամբ՝ հանդիպումներ և քննարկումներ ունենալով ԳՊՀ գրադարանի աշխատակիցների և LNSS ծրագրի անդամների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Էրազմուս+ HERITAG(Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումները զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվության ոլորտների ուսումնական ծրագրերում) ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- 2018թ-ի դեկտեմբեր- GIS ծրագրի տեղադրում ԳՊՀ-ի GIS լաբորատորիայում
- 2018թ-ի դեկտեմբերի 19-ԳՊՀ-ի GIS լաբորատորիայում տեղի ունեցավ աշխատաշուկա–կարիերայի օր՝ նվիրված զբոսաշրջության զարգացման խնդիրներին և հեռանկարներին «Զբոսաշրջության կառավարում»

մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման, զբոսաշրջության մեջ երկրատեղեկատվական համակարգերի կիրառման և կրթական ծրագրերին արտաքին և ներքին շահակիցների կողմից ներկայացվող պահանջների և առաջարկների ուսումնասիրությանը:

- 2018թ-ի դեկտեմբերի 10-21-ը գիտակրթական բարեփոխումների հիմնադրամի (SERF) փորձագետ և ոլորտի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանը «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողների և ԳՊՀ դասախոսական աշխատակազմի համար իրականացրել է «Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը զբոսաշրջության մեջ» դասընթաց՝ համապատասխան ծրագիրը համակարգիչներում տեղադրելուց հետո:
- 2019թ-ի ապրիլի 3-ից 6-ը Թբիլիսիի Վրաստանի տեխնիկական համալսարանում տեղի է ունեցել ծրագրի ամփոփիչ համաժողովը, որին ԳՊՀ-ից մասնակցում էր Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ և Երկրատեղեկատվական տեխնոլոգիայի լաբորատորիայի պատասխանատու, ERASMUS+ HERITAG ծրագրի աշխատանքային խմբի անդամ Գուրգեն Մինասյանը, որը ներկայացրեց ԳՊՀ–ում HERITAG ծրագրի ազդեցության, «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտության ներդրման կարևորությունը, իրականացվող ուսումնական պլանի և նրանում դասավանդվող միջառարկայական դասընթացների մասին,
- 2019թ-ի մայիսի 6-11-ը Գորիսի պետական համալսարանում գործող GIS լաբորատորիայում իրականացվել է «Երկրատեղեկատվական համակարգերի հիմունքներ» թեմայով վերապատրաստման երկրորդ դասընթացը, որը վարել է ծրագրի գործընկեր կազմակերպության՝ Գիտակրթական բարեփոխումների հիմնադրամի փորձագետ Մաշտոց Ավետիսյանը:
- 2019թ-ի ապրիլի 2-6-ը Թբիլիսիում, Վրաստանի տեխնիկական համալսարանում տեղի ունեցավ ծրագրի եզրափակիչ աշխատաժողովը, որին ԳՊՀ-ից մասնակցում էր ԵՀ լաբորատորիայի պատասխանատու և ծրագրի աշխատակից Գ. Մինասյանը:
- 2019թ-ի հունիսի 17-ին տեղի ունեցավ ծրագրի արդյունքների մշտադիտարկում, որի ժամանակ ներկայացվեց 2017թ-ից ԳՊՀ-ում գործող եռամյա ծրագրի իրականացման, շոշափելի արդյունքների, ծրագրի շրջանակներում ներդրված «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական ծրագրի, դրա շուկայական պահանջների ու առաջնահերթություններին համապատասխանեցված ակադեմիական առարկայացանկի, ԳՊՀ-ում GIS լաբորատորիայի ստեղծման և գործունեության ընդլայնման մասին:
- Պատրաստվել և ներկայացվել են ծրագրերի վերջնական տեխնիկական և ֆինանսական հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակահատվածում Էրազմուս+ծրագրի 2019թ. Առաջարկների ներկայացման մրցույթի (Call for Proposals) հրապարակումից հետո համալսարանը կոնսորցիումի անդամության և համագործակցության երկու առաջարկներ էր ստացել Էրազմուս+ՀԳ2 «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության բնագավառում» ծրագրերին դիմելու համար: Կոնսորցիումի շրջանակում հաջողվել է դիմել

դրամաշնորհային մրցույթին՝ հանդես գալով 2 նախագծերով, որոնք թեև չեն արժանացել դրամաշնորհի, սակայն դրանցից մեկը, որը սպասման ցուցակում է կրկին կներկայացվի մրցույթին՝ Կրթության, առդիովիզուալ և մշակույթի գործադիր գործակալության կողմից արված դիտողությունների շտկումից հետո:

Բաժնի աշխատակիցները նաև պարբերաբար մասնակցել են նաև Էրազմուսի ազգային գրասենյակի կազմակերպած միջոցառումներին:

2018թ-ի նոյեմբերի 6-ին և 7-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում տեղի են ունեցել հերթական Էրազմուս+ Տեղեկատվական օրերը Հայաստանում: Առաջին անգամ Էրազմուս+ տեղեկատվական օրերի շրջանակներում Երևանում կազմակերպվեց պանելային քննարկում ԿԳՆ ներկայացուցիչների և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Գավառի պետական համալսարանի և Գորիսի պետական համալսարանի ռեկտորների հետ:

2018թ. նոյեմբերի 16-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ (LNSS, HARMONY, BOOST, INCLUSION, C3QA, e-DRONE) և ավարտված Տեմպուս ծրագրերի (PEOPLE, PICASA, ALIGN, GOVERN, VERITAS, ESPAQ, TNE-QA) կլաստերային հանդիպում ուղղված ինստիտուցիոնալ կառավարման բարեփոխումներին և հիմնախնդիրներին, որի նպատակն էր ներկայացնել ներդրված կառուցվածքների և կանոնակարգերի փաստացի կիրառումը, նպաստել գիտելիքի փոխանակմանն ու ծրագրերի միջև փոխգործակցության խթանմանը, բացահայտել լավագույն փորձը և հաղթահարել ծառացած խոչընդոտները, խուսափել կրկնություններից, բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածության և Էրազմուս+ ծրագրի ընդհանուր տեսանելիության ու ազդեցության մակարդակը:

2019թ-ի ապրիլի 18-ին Եվրասիա միջազգային համալսարանում ներկայացվեցին «ԵՄ և գործընկեր երկրների բարձրագույն կրթության, հետազոտության և նորարարության բնագավառների միջազգայնացման ներդաշնակության զարգացման» HARMONY ծրագրի հիմնական արդյունքները: ԳՊՀ-ից միջոցառմանը մասնակցում էր ԱԿՀ բաժնի մասնագետ Սոնա Ալավերդյանը:

2019թ-ի մայիսի 16-17-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում տեղի է ունեցել Հայ-Ավստրիական կոնտակտային սեմինար, որի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ ու քննարկումներ հայկական և ավստրիական համալսարանների ներկայացուցիչների միջև: Ավստրիական պատվիրակությունը բաղկացած էր 20 մասնակիցներից 12 բուհերից և ազգային գործակալությունից, իսկ հայաստանյան կողմից հանդիպմանը մասնակցեցին 45 ներկայացուցիչներ երևանյան և մարզային 22 բուհերից: ԳՊՀ-ից միջոցառմանը մասնակցում էր ԱԿՀ բաժնի մասնագետ Սոնա Ալավերդյանը:

Երևանում կոնտակտային սեմինարի թիրախային խումբը ակադեմիական հանրության ներկայացուցիչներն էին, ովքեր շահագրգռված էին ավստրիացի գործընկերների հետ նոր գործընկերություններ հաստատելու և ԵՄ-ի կողմից

ֆինանսավորվող Էրազմուս+ ծրագրի շրջանակներում համաձայնագրեր նախաձեռնելու ուղղությամբ:

2019թ. հունիսի 18-ին Էրազմուս+ ծրագրի անհատների ուսումնական շարժունության գործողությունների վերաբերյալ վերապատրաստում անցկացվեց Գորիսի պետական համալսարանում՝ դասավանդողների և ուսանողների համար: Վերապատրաստումը մեկնարկեց ԳՊՀ-ի ուսանողներին Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրերի ներկայացմամբ Էրազմուս+ գրասենյակի Ծրագրի պատասխանատու Էդիթ Սողոմոնյանի կողմից: Վերապատրաստման երկրորդ հատվածի ընթացքում Էրազմուս+ գրասենյակի Ծրագրի պատասխանատու Անի Թորոսյանը ԳՊՀ-ի դասախոսներին և վարչական կազմին ներկայացրեց Կրեդիտային շարժունության միջոցով Ծրագրային երկրների հետ երկկողմանի փոխանակումներ իրականացնելու հնարավորությունները:

Մասնակիցները ծանոթացան դիմելու ընթացակարգին և հայաստանի դիմորդների մասին վիճակագրական տվյալներին:

2019թ-ի հունիսի 25-26-ին Թբիլիսիում տեղի կունենա «Կրթության և մշակույթի միջոցով ընդհանուր արժեքների խթանումը» խորագրով Արևելյան Գործընկերություն խորհրդաժողովը: Միջոցառումը կազմակերպվում է Եվրոպական Հանձնաժողովի կոմից՝ նպատակ ունենալով քննարկել ժողովրդավարացման, կրթության ամբողջականության և ներառականության, մեդիագրագիտության և միջմշակութային երկխոսության հիմնախնդիրները: ԳՊՀ-ից միջոցառմանը մասնակցում էր ԱԿՀ բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը:

ԳՊՀ աշխատակիցների և ուսանողների անգլերենի իմացության բարելավում: ԳՊՀ ԱԿՀ բաժինը համալսարանի միջազգայնացմանը և շարժունության գործընթացներին ընդառաջ՝ քայլեր է ձեռնարկել աշխատակիցների և ուսանողների համար անգլերենի երկարաժամկետ դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ԽԿ կամավորի և Օտար լեզուների ամբիոնի օգնությամբ կազմակերպվել և իրականացվել են աշխատակիցների համար անգլերենի տարբեր մակարդակների դասընթացներ ԳՊՀ 32 դասախոսների և վարչական աշխատակազմի համար: Դասընթացները նպատակային ու արդյունավետ կազմակեպելու համար կարևորելով համալսարանի աշխատակիցների՝ անգլերենի իմացության մակարդակների (A1, A2, B1, B2), նրանց՝ անգլերեն սովորելու կամ այն բարելավելու պատրաստակամության և կիրառման նպատակների մասին հստակ տեղեկություն ձեռք բերելը՝ բաժինը հետազոտություն է իրականացրել աշխատակիցների շրջանում, որի արդյունքները օգնել են ոչ միայն պարզել աշխատակիցների՝ անգլերենի իմացության մակարդակն ու նրանց վերաբերմունքը անգլերեն սովորելու կամ գիտելիքները բարելավելու նկատմամբ, այլև իմանալ խնդրի շուրջ նրանց հուզող հարցերի ու առաջարկությունների մասին: Դասընթացին պատշաճ մակարդակով մասնակցածները վաստակել են 2-ական կրեդիտ: Դասընթացների շարունակականությունն ու արդյունավետությունը ապահովելու համար բաժինը՝ օտար լեզուների ամբիոնի հետ համատեղ մշակում է դրանց անցկացման ժամանակացույց:

ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության բաժնի գործունեության

լուսաբանում: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի գործունեության և այլ միջոցառումների մասին տեղեկատվություն տարածելու նպատակով բաժինը ակտիվորեն համագործակցել է ԳՊՀ հանրային կապերի և լրատվության բաժնի հետ՝ համալսարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար տեղադրելով բաժնի կողմից կազմակերպված միջոցառումների հայտարարությունները, աշխատանքների արդյունքները:

2020թ-ի նոյեմբերի 5-ին հրապարակվել է Էրազմուս+ ծրագրի 2020 թ. առաջարկների մրցույթը: Այս տարվա մրցույթին ԳՊՀ-ն ստացել է կոնսորցիումի անդամության և համագործակցության նոր՝ թվով տաս առաջարկներ: Նոր ծրագրերը մշակման փուլում են: Դրանց ներկայացման վերջնաժամկետը 2020թ-ի փետրվարի 5-ն է: Բաժինը նաև հայտեր է ներկայացրել ապագա շարժունության և փոխանակման ծրագրերի մասնակցության համար:

Խնդիրներ: Արտաքին կապերի և համագործակցության ոլորտում առկա խնդիրներն են՝

- ուսանողների և աշխատակիցների՝ շարժունության ծրագրերի բացակայությունը
- օտար լեզուներով հետազոտական աշխատանքների բացակայությունը,
- ԳՊՀ-ում օտարալեզու կրթական ծրագրերի բացակայությունը:

ԱԿՀ բաժնի ղեկավար՝ ---------- /Ն. Սաֆարյան/

21.11 2019թ